ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՄԱԿ-ի ժնևյան խարտիան Կայուն բնակարանային տնտեսության մասին

Բոլորի համար ապահովել արժանապատիվ, պատշաճ, մատչելի և սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող բնակարանների հասանելիությունը

UNECE

UNITED NATIONS ECONOMIC COMMISSION FOR EUROPE

ՄԱԿ-ի Ժնևյան խարտիան Կայուն բնակարանային տնտեսության մասին իրավաբանական ոչ պարտադիր ուժ ունեցող փաստաթուղթ է, որի նպատակն է աջակցել անդամ երկրներին, որոնք ձգտում են բոլորի համար ապահովել արժանապատիվ, պատշաճ, մատչելի և սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող բնակարանների հասանելիությունը:

ՄԱԿ-ի Ժնևյան խարտիան Կայուն բնակարանային տնտեսության մասին հաստատվել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից՝2015թ. ապրիլի 16-ին (E/ECE / 1478 / Rev.1):

Խարտիան հասանելի է անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով:
Խարտիայի օրինակը կարող եք ներբեռնել www.unece.org/housing/charter կայքից կամ օգտվելով ստորև ներկայացված QR կոդից.

Գլուխ 1.

Կայուն բնակարանային տնտեսության մարտահրավերները

Միավորված Ազգերի Կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի անդամ երկրները նշում են, որ.

1. Մարդու որակյալ կյանքի ապահովման առումով կայուն բնակարանային տնտեսությունն ունի առանցքային դերակատարություն: Բնակարանային տնտեսության դրական ազդեցությունը կարելի է մեծացնել՝ բնապահպանական, տնտեսական արդյունավետության, սոցիալական ներառականության ու մասնակցության, և մշակույթների համարժեքության սկզբունքներ կիրառելու պարագայում: ԵՏՀ տարածաշրջանում կայուն բնակարանային տնտեսության զարգացման գործընթացում առաջ են գալիս բազմաթիվ մարտահրավերներ՝ մեծապես պայմանավորված գլոբալացումով, ժողովրդագրական փոփոխություններով, կլիմայի փոփոխությամբ և տնտեսական ճգնաժամով:

2. Բնակֆոնդի շինարարությունը, կառավարումը և շենքերի քանդումը ազդում են շրջակա միջավայրի վրա. դրանք ուղեկցվում են ռեսուրսների (հող, ջուր, էներգակիրներ և շինանյութ) սպառմամբ և օրինակ՝ ջերմոցային գազերի արտանետումներով: Այդ ազդեցության նվազեցման համար պահանջվում է ինչպես կառավարությունների և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն, այնպես էլ ԵՏՀ և այլ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող գործողությունները: Բնակարանային տնտեսության արդյունավետ կառավարումը, շենքերի բնապահպանական բնութագրիչների բարելավման նպատակով լայնածավալ հիմնանորոգման ուղղված ներդրումները և բնակարանների մատչելիությունն ընդլայնման համար ֆինանսական մեխանիզմների մշակումը պետք է գտնվեն քաղաքականության առաջնահերթությունների շարքում: Նախագծման ընթացքում կենսափուլային մոտեցման ներդրումը դիտարկվում է որպես շրջակա միջավայրի վրա այս ոլորտի

բացասական ազդեցության նվազեցնելու միջոցներից մեկը:

3. Դեգրադացված քաղաքային միջավայրը՝ աղտոտված օդով և աղմուկով, ինչպես նաև կանաչ տարածքների և շարժունակության հնարավորությունների անբավարարության, սպառնալիք է առողջության համար: Բնակարանային պայմանները ևս ուղղակիորեն ազդում են բնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության վրա: Անբարենպաստ բնակարանային պայմանները և փակ տարածությունները ևս կարող են առաջ բերել, կամ նպաստել այնպիսի կանխարգելվող հիվանդությունների և վնասվածքների առաջացման պատճառ, ինչպիսիք են օրինակ շնչառական, նյարդային համակարգի ու սրտանոթային հիվանդություններն ու քաղցկեղը:

4. 2008 թվականի ֆինանսական և տնտեսական ճգնաժամն ակնհայտորեն ընդգծեց այն կենսական դերը, որն ունի կայուն և թափանցիկ բնակարանային շուկան տնտեսության մեջ: Ճգնաժամի հետևանքով որոշ երկրներ բնակարանային շուկաներում բախվեցին մտահոգիչ անհավասարակշռության հետ՝ կապված գրավադրված սեփականության օտարման, անօթևանության, բնակարանային ֆոնդի ավելցուկի և մատչելի բնակարանների սակավության հետ:

5. Բնակչության աղքատ, անապահով և խոցելի խմբերը[1] կարող են զգալ մատչելի գնով պատշաճ բնակարանների պակաս, բախվել անառողջ և ոչ ապահով բնակարանների և ֆիզիկական արգելքների և/կամ դրանց հետ կապված խտրականության ու մեկուսացման հետ: Նրանք ապրում են ետնախորշերում և ոչ հիմնական շինություններում, որտեղ հաճախ բացակայում են ջրամատակարարումը, կոյուղին և կոմունալ այլ ծառայությունները:

[1]Խոցելի մարդկանց և խմբերի սահմանումն ըստ երկրների տարբեր է, և կարող է ընդգրկել՝ երիտասարդներ, տարեցներ, բազմազավակ ևմեկ ծնողի ընտանիքներ, ընտանեկան բռնությունների զոհեր, հաշմանդամություն ունեցող անձիք, այդ թվում՝ հոգեկան, մտավոր և/կամ ֆիզիկական արատներով տառապողներ, ներգաղթյալներ, փախստականներ, գնչուական համայնքներ և փոքրամասնություն կազմող այլ խմբեր:

6. Որոշ դեպքերում ուրբանիզացիան հանգեցնում է քաղաքների տարերային աճի: Դա բացասաբար է ազդում գոյություն ունեցող բնակավայրերի վրա՝ նվազեցնելով այլ նպատակներով օգտագործման համար նախատեսված տարածքները: Այլ դեպքերում անվերահսկելի ուրբանիզացիան հանգեցնում է անօրինական բնակավայրերի առաջացմանն ու ընդլայնմանը, որոնց բնակիչները կարող են զրկված լինել գույքի տնօրինման և օգտագործման իրավական երաշխիքներից, սոցիալական և ֆիզիկական ենթակառուցվածքներով:

7. Բնական աղետները, ինչպիսիք են երկրաշարժերը, ջրհեղեղները և սողանքները, ինչպես նաև մարդու գործունեությամբ պայմանավորված աղետները զգալի վնաս են հասցնում ԵՏՀ ամբողջ տարածաշրջանի բնակարանային տնտեսություններին և լուրջ մարտահրավեր են հանդիսանում կառավարությունների ու տարածաշրջանի համար: Ազգային քաղաքականությունը և պլանավորումը հաճախ բավարար չեն, որպեսզի կանխարգելեն և նվազագույնի հասցնեն աղետների և արտակարգ իրավիճակների պատճառած վնասը: Անհրաժեշտության դեպքում տուժած բնակչության համար բնակության բավարար պայմաններ պետք է ապահովվեն միջազգային և մարդասիրական օգնության հաշվին:

8. Կլիմայի փոփոխությունն արդեն դարձել է անխուսափելի իրականություն, որն ուղեկցվում է գլոբալ ջերմաստիճանի բարձրացմամբ, հեղեղների, փոթորիկների ու սողանքների թվի աճով, որոնք սպառնում են մարդու կյանքին և ունեցվածքին և բերում են տնտեսական ու սոցիալական վնասների: Անհրաժեշտություն կա, որպեսզի բնակելի շենքերն և բնակավայրերը լինեն դիմակայուն եղանակային ծայրահեղ երևույթների, այդ թվում՝ կլիմայի փոփոխությամբ և կլիմայի փոփոխականությամբ պայմանավորված երևույթների նկատմամբ:

Գլուխ 2.

Նպատակը, խնդիրը և սկզբունքները

9. Խարտիան պարտադիր իրավականորեն չպարտավորեցնող փաստաթուղթ է: Խարտիայի նպատակն է աջակցել անդամ երկրներին, որոնք ձգտում են բոլորի համար ապահովել արժանապատիվ, պատշաճ, մատչելի և սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող բնակարանների հասանելիությունը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով շրջակա միջավայրի վրա բնակարանային տնտեսության ազդեցությանը:

10. Խարտիայի խնդիրն է՝ տարածաշրջանի կայուն զարգացումը խթանելու նպատակով ԵՏՀ տարածաշրջանում բարելավել բնակարանային տնտեսության կայունությունը բոլոր մակարդակներում՝ միջազգային համագործակցության աջակցությամբ և արդյունավետ քաղաքականությունների և գործողությունների իրականացման միջոցով:

11. Խարտիան նպաստում է քաղաքների և բնակավայրերի[2] կայուն զարգացման համապատասխան նպատակների իրականացմանը և ՄԱԿ-ի ՀԱԲԻԹԱԹԻ գլոբալ բնակարանային ռազմավարության շրջանակային փաստաթղթի[3] կատարմանը:

12. 1-ին գլխում ընդգծված մարտահրավերների հաղթահարման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել կայուն բնակարանային տնտեսության հիմքում ընկած հետևյալ չորս սկզբունքներն ու դրանց վերաբերող հիմնավորումները.

ա) շրջակա միջավայրի պաշտպանություն,
բ) տնտեսական արդյունավետություն,
գ) սոցիալական ներառում և մասնակցություն,
դ) մշակութային համարժեքություն:

[2]Կայուն զարգացման նպատակների բաց աշխատանքային խմբի կողմից արված առաջարկությունների նախաբան, 19-ը հուլիսի, 2014թ.:
Տես՝ http://sustainabledevelopment.un.org/content/documents/4518outcomedocument.pdf
[3]Տես՝ HSP/GC/24/2/Add.6 փաստաթուղթը, և համապատասխան որոշումները՝ http://unhabitat.org/wp-content/uploads/2014/02/Decisions-and-resolution-GC-24th-session.pdf

Շրջակա միջավայրի պահպանության

ա) Շրջակա միջավայրի պաշտպանություն

13. Բնակարանային տնտեսությունը պետք պլանավորել, կառուցել և օգտագործել այնպես, որ այն նվազագույնի հասցնի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և նպաստի շրջակա միջավայրի կայունությանը: Դրան պետք է հասնել հետևյալի միջոցով.

   i. բնակարանային շինարարության մեջ այնպիսի գործնական մեթոդների կիրառում, որոնք շենքերի ամբողջ կենսափուլի ընթացքում՝ սկսած նախագծային աշխատանքներից, շինանյութի մատակարարումից, մոնտաժումից ու շինարարությունից մինչև շահագործումն ու սպասարկումը, հիմնանորոգումն ու քանդումը նպաստեն ածխածնի արտանետումների նվազեցմանը,

   ii. բնակելի տարածքների բնապահպանական և էներգետիկ ցուցանիշների բարձրացում, որը կնպաստի էներգետիկ աղքատության դեմ պայքարին, բնակիչների կյանքի որակի բարելավմանը և նրանց առողջական խնդիրների նվազեցմանը,

   iii. կայուն քաղաքային բնակավայրեր, որոնք հնարավորության դեպքում, օգտագործում են վերականգնվող էներգիայի աղբյուրներ, և նախապես հաշվի են առնում կլիմայի փոփոխության ազդեցությունը,

   iv. հնարավորության սահմաններում առկա բնակելի շենքերի վերազինում՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով,

   v. բնակֆոնդ, որը պատշաճ պլանավորման, նախագծման և անվտանգ շինարարության շնորհիվ դիմակայուն է բնական և մարդածին ազդեցությունների նկատմամբ,

   vi. կանաչ տարածքներ բնակելի թաղամասերում և դրանց

շուրջ, ներառելով նաև այն տարածքները, որոնք ապահովում են վայրի բնության կենսատարածությունը, ինչպես նաև ժամանցի, սպորտի և քաղաքային գյուղատնտեսական գործունեություն ծավալելու վայրերը,

vii. կոմպակտ բնակելի թաղամասեր՝ քաղաքների պլանավորված աճի և տարերային ընդլայնումը կանխարգելելու նպատակով,

viii. բնակավայրեր որոնք առաջնահերթություն են տվել կայուն, ինտեգրված տրանսպորտային համակարգերի և կանաչ ենթակառուցվածքների ստեղծմանը,

ix. առողջ ապրելակերպի խրախուսում. բնակարանների պատշաճ նախագծման, ընթացիկ պահպանության և վերազինման միջոցառումների միջոցով,

x. թափոնների կառավարումը. որպես կայուն բնակարանային տնտեսության ռազմավարության բաղադրիչ, խրախուսելով նաև թափոնների օգտահանումը, վերամշակումը և կոմպոստացումը, ներառյալ բնակարանաշինության ու շենքերի քանդման ժամանակ առաջացող և կենցաղային աղբը:

Տնտեսական արդյունավետություն

բ) Տնտեսական արդյունավետություն

14. Բնակարանային տնտեսությունը եղել և մնում է ազգային տնտեսության կարևոր ոլորտ: Բնակարանային տնտեսությունը պետք է լինի ինչպես զարգացող տնտեսության կայուն բաղադրիչ, այնպես էլ այն ոլորտը, որի գործունեությունն ուղղված է մարդու կարիքների բավարարմանը: Դրան պետք է հասնել հետևյալի միջոցով.

   i. բնակարանի չեզոք և անվտանգ տնօրինման իրավունքի ապահովում (այսինքն, սեփականության իրավունքով բնակարանի ձեռքբերման և վարձակալության միջև ճկունություն),

   ii. կադաստրային և հողի գրանցման մասին տվյալներ և ծառայություններ, որոնք կնպաստեն բնակարանային տնտեսության մեջ ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, բնակարանի ու հողի նկատմամբ սեփականության տնօրինման իրավունքի երաշխիքների խթանմանը,

   iii. թափանցիկ, արդյունավետ և գործուն հաշվառում, հիփոթեքային վարկերի տրամադրման կարգավորիչ ընթացակարգերի և գրավադրման կանոնների կիրառում՝ հիփոթեքային վարկերի հասանելիությունը, սպառողների իրավունքների պաշտպանությունը, նրանց բնակարանի տնօրինման անվտանգության մակարդակի բարձրացումը, բնակարանի ընտրության տարբերակների ավելացումն և ձեռք բերված բնակարանը կորցնելու վտանգի նվազեցումն ապահովելու նպատակով,

   iv. Կայուն բնակարանային տնտեսության մեջ ներդրումների ավելացում՝ մասնավոր և պետական միջոցների հաշվին,

հիմնվելով պետություն- մասնավոր հատվածի գործ-ընկերության և ֆինանսավորման այլ գործիքների վրա,

v. էներգաարդյունավետության բարձրացման հաշվին էներ-գետիկ աղքատությունը կրճատելու նպատակով բնակա-րանաշինություն և բնակարանների հիմնանորոգում, ինչպես նաև առկա բնակֆոնդի վերազինում (ինչը կնպաստի նաև կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանը և հարմարվողականությանը),

vi. բնակարանաշինություն՝ հիմնված այնպիսի շինարարա-կան նորմերի և ստանդարտների վրա, որոնք խթանում են ընդհանուր գործելակերպի, ընթացակարգերի և արտա-դրանքի դասակարգման ներդաշնակեցմանը՝ ապահովելու համար համատեղելիությունը և շենքերի անվտանգու-թյունը,

vii. բնակֆոնդի ստեղծում, որի նախագծման, շինարարության, վերազինման և շենքերի ընթացիկ նորոգման աշխատանք-ները՝ հնարավորության սահմաններում, կատարվում են տեղական լուծումների, աշխատուժի և շինանյութի հաշվին, այդպիսով բարձրացնելով տեղական բնակչության զբաղ-վածության մակարդակը,

viii. առկա բնակարանային տնտեսության արդիականացում՝ համապատասխան տեխնոլոգիաների կիրառմամբ և նոր աշխատատեղեր ստեղծելու պայմանով,

ix. աղքատ և անօրինական բնակավայրերի բնակիչներին հնարավորության և նպատակահարմարության դեպքում ենթակառուցվածքների և ծառայությունների մատուցում,

x. ազգային քաղաքականություն և ծրագրեր, որոնց նպա-տակն է, հնարավորության և նպատակահարմարության դեպքում, ապօրինի շինությունների բնակիչներին խրա-խուսել օրինականացնելու իրենց շինությունները և բարձ-րացնել դրանց որակը, եթե տեղանքի աշխարհագրական

դիրքը և այլ գործոններ թույլ են տալիս պահպանել անվտանգության և այլ նվազագույն պահանջները,

xi. քաղաքային միջավայրի առավել համալիր զարգացում և վերականգնում՝ տարածական առումով աշխատավայրերը և ծառայությունները բնակելի թաղամասերին մոտեցնելու միջոցով, հաշվի առնելով պոտենցիալ վտանգներն ու ռիսկերը,

xii. տարածական պլանավորում, որը ներառում է տնտեսական գործունեության արդյունավետ բաշխմանը, տեխնիկական և սոցիալական ենթակառուցվածքների ու ծառայություններ-ի բարելավմանը, շրջակա միջավայրի վերականգնմանը, մատչելի գներով բնակարանների առկայությանը և քաղաքների անվերահսկելի աճի կանխարգելմանն ուղ-ղված քաղաքականություն:

Միավորված ազգերի կազմակերպություն
Տնտեսական հանձնաժողով Եվրոպայի համար

գ) Սոցիալական ներառում և հասարակության մասնակցություն

15. Բնակարանային տնտեսության հետագա զարգացման քաղաքականությունը և նրա շուրջ քննարկումները պետք է ուղեկցվեն առավել մեծ ուշադրությամբ՝ գիտակից և համաձայնեցված քաղաքացիական մասնակցության, սոցիալական ներառականության, հանրային առողջապահության, թափանցիկության և բարոյագիտական խնդիրների կարևորության վրա: Դրան պետք է հասնել հետևյալի միջոցով.

   i. պետական աջակցության գործիքներ՝ արժանապատիվ, պատշաճ, ապահով, և մատչելի և բնակարանների ապահովման համար, ներառյալ հիմնական կոմունալ հարմարությունների ու ծառայությունների հասանելիությունը, ինչը կնպաստի սոցիալական համախմբվածությանը և կօժանդակի սոցիալական տարբեր խմբերի՝ այդ թվում նաև բնակչության ծայրահեղ մեկուսացված և խոցելի խմբերի ու մարդկանց, բնակարանային կարիքների բավարարմանը,

   ii. առաջարկվող բնակարանների, մասնավորապես, հասանելի գնով և սոցիալական բնակարանների քանակի ավելացում, օգտագործելով տարբեր գործիքներ, այդ թվում այնպիսիք, որոնք բնակարանի վարձակալումը կամ սեփականության իրավունքով ձեռքբերումը կդարձնեն հավասարապես գրավիչ,

   iii. բնակարանային տնտեսության պլանավորում, նախագծում, վերազինում այնպես, որպեսզի այն խրախուսի

առողջ ապրելակերպը, խթանի նախագծային համընդհանուր սկզբունքների կիրառման, այդպիսով բարձրացնելով բնակարանների հարմարավետությունը բոլոր անձանց համար՝ անկախ նրանց տարիքից, սեռից, հաշմանդամության առանձնահատկություններից և խրախուսելով սոցիալապես խառը համայնքների ձևավորմանը,

iv. աջակցություն բնական և մարդածին աղետներից տուժած բնակչությանը՝ համապատասխան բնակարանային լուծումներով,

v. սոցիալական արդարությունը երաշխավորող բնակարանային և հողային քաղաքականություն,

vi. ազգային բնակարանային տնտեսության քաղաքականություն՝ մշակված ժողովրդավարական խորհրդատվական գործընթացների և բնակարանային տնտեսության զարգացման հարցերին վերաբերող փորձագիտական գիտելիքների, ծավալուն տվյալների հավաքագրման, վիճակագրական թափանցիկ հաշվետվությունների և հասարակության կողմից բնակարանային տնտեսության զարգացման բոլոր հարցերին վերաբերող լայն ու ներառական հանրային քննարկումների վրա,

vii. կայուն բնակարանային տնտեսության բոլոր հարցերին վերաբերող հետազոտությունների և գիտելիքների փոխանակում,

viii. արդյունավետ, հստակ և թափանցիկ կառավարում բոլոր մակարդակներում, ներառյալ բնակարանային հարցերով որոշումների բողոքարկման ինստիտուցիոնալացված ընթացակարգեր:

Մշակութային համագործակցություն

դ) Մշակութային համարժեքություն

16. Բնակարանային քաղաքականության մեջ պետք է հաշվի առնվեն մշակութային ինքնության, արժեքների և հուզական բարեկեցության հարցերը: Դրան պետք է հասնել հետևյալի միջոցով.

   i. ազգային բնակարանային քաղաքականություն, որը հաշվի է առնում սոցիալական և տարածքային առանձնահատկությունները և լանդշաֆտների պահպանությունը ու ընդլայնում է, պատմական և մշակութային ժառանգությունը,

   ii. մշակութային և սոցիալական միջոցառումների համար նախատեսված հասարակական վայրերի զարգացման կարևորում,

   iii. բնակարանային տնտեսություն, որը հաշվի է առնում բնակիչների սոցիալական ծագումը և մշակութային առանձնահատկությունները,

   iv. բնակելի շենքերի և միկրոշրջանների նախագծում և պահպանություն, որը ապահովում է բնակիչների հուզական բարեկեցությունը, այդ թվում գործընթացում ներգրավելով տեղական համայնքներին:

Գլուխ 3.

Բնակարանային տնտեսության գործունեության հիմնական ուղղությունները և կայուն աշխատանքի խթանման միջոցառումները

17. Կայուն բնակարանային տնտեսության բնագավառում առաջադիմության հասնելու համար անդամ երկրները մտադիր են իրենց գործունեությունն իրականացնել հետևյալ չորս հիմնական ուղղություններով.

ա) սահմանափակել շրջակա միջավայրի վրա բնակարանային տնտեսության բացասական ազդեցությունը և բարձրացնել բնակարանային ոլորտի էներգաարդյունավետությունը,

բ) օժանդակել բնակարանների հասանելիության ընդլայնմանը՝ կայուն տնտեսական զարգացման համատեքստում,

գ) օժանդակել պատշաճ, համարժեք, սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող, առանց արգելքների և անվտանգ բնակարանաշինությանը,

դ) օժանդակել կայուն բնակարանային տնտեսության սկզբունքների անշեղ կիրառմանը:

18. Անդամ երկրները կողմ են հետևյալ գործողությունների իրականացմանը.

ա. Սահմանափակել շրջակա միջավայրի վրա բնակարանային տնտեսության բացասական ազդեցությունը և բարձրացնել բնակարանային ոլորտի էներգաարդյունավետությունը՝ հետևյալ միջոցառումների իրականացման շնորհիվ.

i. սպառվող էներգիայի նվազեցման հաշվին բնակարանային ոլորտից կրճատել «ածխածնային հետքը» շենքերի ողջ կենսափուլի ընթացքում, որն ընդգրկում է նախագծման, շինանյութերի մատակարարման և արտադրության, շինարարության, շահագործման ու սպասարկման, նորոգման ու քանդման գործընթացները,

ii. նվազեցնել, մեկ շնչի հաշվով, շրջակա միջավայրի վրա քաղաքների բացասական ազդեցությունը, այդ թվում՝ հատուկ ուշադրություն դարձնելով օդի ու ջրի որակին և

թափոնների կառավարմանը,

iii. կիրառել էներգաարդյունավետությունն ու շրջակա միջավայրի անվտանգությունն ապահովող շինարարական նորմեր ու ստանդարտներ նորակառույց և գոյություն ունեցող բնակելի շենքերում,

iv. ավելացնել ցածր էներգասպառող բնակելի միավորների մասնաբաժինը որպես քաղաքների նորացման մոտեցման համալիր բաղադրիչ,

v. բնակարանային տնտեսությունում ակտիվացնել վերականգնվող էներգիայի աղբյուրների և ցածր ածխածնային տեխնոլոգիաների կիրառումը,

vi. վերազինել և արդիականացնել գոյություն ունեցող բնակֆոնդը շրջակա միջավայրի անվտանգության, էներգաարդյունավետության, գնային մատչելիության և ծախսարդյունավետության սկզբունքների հիման վրա, հնարավորության սահմաններում կիրառելով տեղական լուծումները և գիտելիքները,

vii. մշակել ռազմավարություններ, որոնք ուղղված են բնակարանների նախագծման և շինարարության ժամանակ էկոլոգիական կայունության սկզբունքների կիրառմանը, հատուկ ուշադրություն դարձնելով կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանը և նրա նկատմամբ հարմարվողականությանը,

viii. ընդունել կանաչ բնակարանային տնտեսության քաղաքականություն և ինտեգրել այն քաղաքային և տարածքային կայուն զարգացման քաղաքականության մեջ,

ix. թափոնների հեռացման և ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հարցերը դարձնել կայուն բնակարանային տնտեսության ռազմավարության և քաղաքականության անքակտելի մաս,

x. խրախուսել բազմաբնակարան շենքերի կառուցումը, օժանդակել հասարակական տրանսպորտի համալիր զարգացմանը և ստեղծել բարենպաստ պայմաններ էկոլոգիապես մաքուր տրանսպորտի օգտագործման համար, առաջին հերթին, քաղաքների ընդարձակումը կանխելու և էներգիայի խնայողության նպատակով,

xi. բնակարանային շինարարության շահագրգիռ կողմերին ցուցաբերել պատշաճ տեխնիկական և ֆինանսական աջակցություն, մասնավորապես ապահովելով էներգաարդյունավետության տնտեսական հիմնավորումը և մատչելիությունը, ներառյալ բնակչության առավել խոցելի շերտերի համար,

xii. օժանդակել քաղաքային միջավայրի համալիր զարգացմանը և վերականգնմանը. մշտադիտարկել այն գործընթացները, որոնց օգնությամբ աշխատավայրերը և ծառայությունները տարածական առումով մոտեցվում են բնակելի թաղամասերին՝ հաշվի առնելով պոտենցիալ վտանգներն ու ռիսկերը, ինչպես նաև մեծացնելով դիմակայությունը կլիմայի փոփոխության հանդեպ,

xiii. ապահովել ազատ մուտք դեպի անվտանգ, ներառական, մատչելի, կանաչ և հասարակական նշանակության վայրեր բոլորի, հատկապես բնակչության կարիքավոր խմբերի[4], համար:

բ. Օժանդակել բնակարանների հասանելիության ընդլայնմանը՝ կայուն տնտեսական զարգացման համատեքստում՝ ձեռնարկելով հետևյալ միջոցառումները.

i. բոլորին ապահովել բավարար, անվտանգ և մատչելի

[4]Կայուն զարգացման նպատակների բաց աշխատանքային խմբի համար արված առաջարկությունների նախաբան, 19-ը հուլիսի, 2014թ.:
Տես՝ http://sustainabledevelopment.un.org/content/documents/4518outcomedocument.pdf

բնակարաններով և հիմնական ծառայություններով[5],

ii. մատչելի բնակարանների բավարար առաջարկի ձևավորումը խրախուսելու նպատակով օժանդակել բնակարանի տնօրինման երաշխավորված իրավունքի և բնակարանների ընտրության տարբեր հնարավորությունների իրականացմանը, այդ թվում նաև բնակարանի տնօրինման տարբերակների նկատմամբ չեզոք վերաբերմունք (օրինակ՝ սեփականության իրավունքով կամ վարձակալման հիմունքներով),

iii. բնակավայրի փոփոխության և աշխատուժի շարժունության համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով՝ համապատասխան օրենսդրական և վեճերի լուծման մեխանիզմների միջոցով օժանդակել բնակարանի վարձակալության թափանցիկ և անաչառ շուկաների զարգացմանը՝ վարձատուի և վարձակալի միջև ստեղծելով իրավունքների և պարտականությունների հավասարակշռված հարաբերություններ,

iv. օժանդակել հուսալիորեն, արդյունավետ, արդարացի և թափանցիկ գործող բնակարանային և հողի շուկաներին, որոնք բավարարում են բնակարանների տարբեր տեսակների պահանջարկը, ինչպես նաև նպաստում են սոցիալապես և տնտեսապես անապահով խմբերի համար վարկային միջոցների մատչելիությանը, այդ թվում՝ օգտագործելով ֆինանսավորման այլընտրանքային ձևեր, օրինակ՝ բնակարանների միկրոֆինանսավորումը,

v. մշակել և վերանայել քաղաքների համալիր նորացման և բնակարանների տեխնիկական սպասարկման քաղաքականություն և ընթացակարգեր, այդ թվում՝ կոմունալ տնտեսությունների համակարգերը, ինչպես նաև այդ ոլորտում կանաչ ներդրումների խրախուսումը,

[5]նույն տեղում

vi. խրախուսել բնակֆոնդի արդյունավետ կառավարումը և մշակել մատչելի գներով բնակարանների վերանորոգման մեխանիզմներ,

vii. խթանել ներդրումները կայուն բնակարանային տնտեսության մեջ խրախուսելով պետական և մասնավոր ներդրումները, ակտիվացնելով գործընկերությունը պետական և մասնավոր սեկտորների միջև, օգտագործելով նաև ֆինանսավորման այլ միջոցներ,

viii. անհրաժեշտության դեպքում՝ մշակել օգնություն տրամադրելու ծրագրեր նրանց համար, ովքեր սոցիալական կամ տնտեսական ցնցումների պատճառով չեն կարողանում վճարել բնակարանի ձեռքբերման համար վերցրած վարկը և հայտնվել են անօթևան մնալու սպառնալիքի առաջ,

ix. մշակել շրջանակներ անշարժ գույքի բոլոր սեփականատերերի և վարձակալների իրավունքների և պարտականությունների ապահովման համար,

x. հնարավորության սահմաններում և անհրաժեշտ դեպքերում օժանդակել անօրինական և աղքատ բնակավայրերի բնակիչներին՝ պատշաճ ենթակառուցվածքները և ծառայությունները նրանց համար հասանելի դարձնելու համար,

xi. նպաստել, որ մշակվի ազգային քաղաքականություն և այնպիսի ծրագրեր, որոնք, հնարավորության և անհրաժեշտության դեպքում, միտված են խրախուսելու ապօրինի շինությունների բնակիչներին օրինականացնել իրենց կացարանները և բարձրացնել նրանց որակն այն պայմանով, որ կացարանի աշխարհագրական դիրքը և այլ գործոններ հնարավորություն են տալիս պահպանել նրանց անվտանգության նվազագույն պահանջները,

xii. կայուն բնակարանային տնտեսության նախագծման, շինարարության, վերանորոգման և տեխնիկական

սպասարկման ժամանակ խրախուսել արդյունավետ լուծումների կիրառումը, հարգելով անդամ երկրների մշակութային և աշխարհագրական առանձնահատկությունները,

xiii. սահմանել շինարարական թույլտվությունների տրամադրման արդյունավետ, հստակ և թափանցիկ նորմատիվային կանոնակարգեր և ընթացակարգեր, ինչպես նաև ստեղծել համապատասխան ինստիտուտներ բնակարանային ոլորտում արդարության և ոչ-խտրական մթնոլորտի հաստատմանը նպաստելու և կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով,

xiv. բնակարանային ոլորտում ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծման և հողի ու բնակարանների տնօրինման երաշխիքների ապահովման նպատակով օժանդակել տարածական և կադաստրային տվյալների ու հողի գրանցման և համապատասխան ծառայությունների մասին տեղեկությունների օգտագործմանը,

xv. աջակցել քաղաքներին և բնակավայրերին ընդունել և իրականացնել «խելացի քաղաքի» հայեցակարգեր, սոցիալական ինտեգրման համալիր քաղաքականություն և պլաններ, ապահովելով՝ ներառականությունը, այդ թվում սոցիալապես խառը համայնքների, ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, աղետների և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունությունը[6],

xvi. խրախուսել համալիր տարածական պլանավորումը, որն օժանդակում է տնտեսական գործունեության արդյունավետ տարածական բաշխմանը, բարելավում է տեխնիկական և սոցիալական ենթակառուցվածքները, օժանդակում

[6]Կայուն զարգացման նպատակների բաց աշխատանքային խմբի կողմից արված առաջարկությունների նախաբան, 19-ը հուլիսի, 2014թ.:
Տես՝ http://sustainabledevelopment.un.org/content/documents/4518outcomedocument.pdf

է քաղաքների համալիր զարգացմանը և քաղաքային միջավայրի նորացմանը, նպաստում է մատչելի գնով բնակարանների կառուցմանը, որը նույնպես հակազդում է քաղաքների ընդարձակմանը:

գ. Օժանդակել պատշաճ, համարժեք, սանիտարահիգիենիկ պահանջներին համահունչ, առանց խոչընդոտների և անվտանգ բնակարանաշինությանը՝ իրականացնելով հետևյալ միջոցառումները.

i. բոլորի համար ստեղծել որակյալ և սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող բնակարաններ ձեռք բերելու պայմաններ, կրճատել անօթևանների քանակը և բարելավել առանց խոչընդոտների բնակարանների ձեռքբերման հնարավորությունը,

ii. զարգացնել սոցիալապես խառը համայնքներ և խուսափել սոցիալական խտրականությունից, ջենտրիֆիկացիայից (քաղաքային տարածքների վերափոխում բնակիչների կազմի փոփոխությամբ) և փակ՝ էլիտար թաղամասերից,

iii. խրախուսել առողջ ապրելակերպ բնակարանաշինության նախագծման, բնակարանների շահագործման, սպասարկման և վերասարքավորման, ինչպես նաև բնակելի թաղամասերի ներսում և դրանց շուրջ կանաչ և հանրային նշանակության և տարածքների ստեղծման միջոցով,

iv. պլանավորման, նախագծման և շինարարության ընթացքում խստորեն պահպանելով անվտանգության պահանջները բարձրացնել բնական և մարդածին վտանգների նկատմամբ շենքերի դիմակայունությունը,

v. մշակել կայուն բնակարանային տնտեսության ռազմավարություններ, որոնք կստեղծեն կոմունալ հարմարություններից և ծառայություններից օգտվելու պայմաններ, ապա-

հովելով նաև այդ թվում՝ ապահով խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում,

vi. խրախուսել համընդհանուր ընդունված նախագծային սկզբունքների կիրառումը, դրանով ավելացնելով, պատշաճ բնակարանների հասանելիությունը և անկախ ապրելու հնարավորությունը բոլորի համար,

vii. ապահովել, որ բնակարանային ոլորտի քաղաքականությունը և օրենսդրությունը և դրա իրականացումը լինի ոչ խտրական բնույթի:

դ. Օժանդակել կայուն բնակարանային տնտեսության սկզբունքների անշեղ կիրառմանը՝ իրականացնելով հետևյալ միջոցառումները.

i. հավաքագրել բնակարանային տնտեսության, այդ թվում՝ անօթևանների մասին տվյալները: Անդամ երկրների միջև ստացված տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով կիրառել միջազգային ընդհանուր ստանդարտներ: Քաղաքականությունների մշակմանն օժանդակելու, հետազոտական աշխատանքներին և տնտեսության զարգացմանը նպաստելու համար, հրապարակել այդ տվյալները և ազգային վիճակագրությունը: Քաղաքականությունների մշակման գործընթացին օժանդակելու համար օգտվել գլոբալ և տարածաշրջանային տվյալների շտեմարաններից:

ii. կայուն բնակարանային տնտեսության բոլոր ոլորտներում խրախուսել գիտահետազոտական և նորարարական աշխատանքների համար կատարվող ներդրումները,

iii. օժանդակել արդյունավետ կառավարմանը բոլոր մակարդակներում, համագործակցությանը երկրների համապատասխան պետական գերատեսչությունների միջև,

հանրության արդյունավետ մասնակցությանը բնակարանային ոլորտին վերաբերող որոշումների կայացման գործընթացում և օրենքի գերակայությանը,

iv. ամրապնդել բնակավայրերի զարգացման պոտենցիալը, որը հիմնված է հասարակության լայն մասնակցության, համալիր և կայուն պլանավորման և կառավարման կարողությունների վրա,

v. ակտիվացնել փորձի փոխանակումը և համագործակցությունը տարածաշրջանային և միջազգային մակարդակով բնակարանային տնտեսության, քաղաքային պլանավորման և հողերի կառավարման ոլորտում,

vi. շահագրգիռ բոլոր կողմերի համար մշակել և իրականացնել բնակարանային տնտեսության, քաղաքային պլանավորման և հողօգտագործման կառավարման կարողությունների հզորացման ծրագրեր:

Նշումների համար

UNITED NATIONS ECONOMIC COMMISSION FOR EUROPE

Թարգմանվել և տպագրվել է
«Քաղաքային կանաչ
լուսավորություն»
ՄԱԶԾ-ԳԷՖ/ 00074869
ծրագրի շրջանակներում
Է-կայք՝ http://www.nature-ic.am

Empowered lives.
Resilient nations.

ՄԱԿ-ի ժնևյան խարսխան

Կայուն բնակարանային տնտեսության մասին

Միավորված ազգերի
կազմակերպության Եվրոպայի
տնտեսական հանձնաժողովի
Տեղեկատվական ծառայություն

Ազգերի պալատ /Palais des Nations
CH - 1211 Ժնև10, Շվեյցարիա
Հեռախոս՝ +41(0)22 917 44 44
Ֆաքս՝ +41(0)22 917 05 05
Էլ-փոստ՝ info.ece@unece.org
Է-կայք՝ . http://www.unece.org